

Վ. 2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Լ. Վ. ՄԻՔՅՈՅԱՆ

ԱՍՏՐՈՖԻԶԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայ ժողովրդի պատմության մեջ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունները, մասնավորապես աստղագիտությունը, ներկայացված են միայն առանձին գիտնականների անուններով:

Դրանցից ամենանշանավորը Անանիա Շիրակացին է (VII դար), որի հատկապես տիեզերագիտությանը և մաթեմատիկային նվիրված աշխատանքների նշանակությունը դուրս է գալիս նեղ ազգային շրջանակներից:

Պատմական աղբյուրներից առայժմ հայտնի չեն տվյալներ Հայաստանում որևէ աստղադիտարանի գոյության մասին: Չեն գտնվել նաև վկայություններ Հայաստանում կատարված այնպիսի աստղագիտական դիտումների մասին, որոնք ներկայացնեին ինքնուրույն գիտական արժեք:

Սակայն բացառված չէ այն հնարավորությունը, որի հին ձեռագիրի ուսումնասիրությունը հետագայում կարող է հանդիցնել երկնային արտակարգ երևույթների՝ նոր աստղերի բռնկումների կամ գիսավորների գիտումների վերաբերյալ հետաքրքիր տվյալների հայտնաբերմանը:

Գիտության զարգացման վիճակը առանձնապես անմիտարական է եղել Հայաստանի քաղաքական անկախությունը կորցնելուց հետո:

Ճշգրիտ, հատկապես ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ Հայաստա-

նույն սահեղծվում են միայն սովորական կարգեր հաստատվելուց
հետո:

Այդ ուղղությամբ վճռական նշանակություն ունեցավ Երևանի
Պետական Համալսարանի ստեղծումը 1921 թվականի Հունվարին:

Համարաբանի առաջին շրջանավարաները կոչված էին աշ-
խատելու լուսավորության, կուլտուրայի և ժողովրդական տնտե-
սության ամենատարրեր բնագավառներում: Հետապայտում, սակայն,
առանձնահատուկ ուշագրություն է նվիրվում զիտական կազրերի
պատրաստմանը:

Աստղագիտության բնագավառի մասնագետներ պատրաստե-
լու նպատակով 1933—1934 ուսումնական տարում Համարաբանին
կից կազմակերպվում է Երևանի Աստղագիտարանը: Վերջինս
Հիմնականում հետապնդում էր ուսումնական նպատակներ Դի-
տողական Հիմնական գործիքը 9-զմույթանոց վիզուալ աստղագի-
տակն էր, որը պատկանում էր Լենինգրադի Համարաբանի Աստ-
ղագիտարանին և արվել էր նորակասույց Աստղագիտարանին
ժամանակավոր օգագործման նպատակով: Լուսանկարչական դի-
տումների համար այդ զիտակի վրա տեղակայված էր երկու կա-
մերա:

Որակյալ մասնագետների և զիտագիտական ժամանակակից գոր-
ծիքների բացակայության պատճենում Երևանի Աստղագիտարա-
նում իրենց զիտական նշանակությամբ աշքի ընկնող զիտողական
աշխատանքներ շնորհ կատարվել: Սակայն Աստղագիտարանի գի-
րեկտոր, Մուկվացի Համալսարանում աստղագիտական կրթություն
ստացած Լ. Լ. Մեմյոնովի ղեկավարությամբ Աստղագիտարանի
սակագալաթիվ աշխատակիցները կատարել են որոշ հետազոտու-
թյուններ՝ նվիրված փոփոխական աստղերին, Արեգակի ակտիվու-
թյանը, մետեորներին և Հայաստանում աստղագիտության պատ-
մությանը:

Միևնույն ժամանակ Հետաքրքիր աշխատանքներ են կատար-
վել երկնային մեխանիկայի գծով (Գ. Կ. Բաղդալյան):

Աստղագիտարանում այդ տարիներին կատարվող գիտական
հետազոտություններին մասնակից են նզել նաև Լենինգրադի և
Մուկվայի մի քանի աստղագետներ:

1938 թվականին Երևանի Աստղագիտարանն անցնում է ՍՍՌՄ
Դիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի իրավասիու-
թյանը:

Եռատով Աստղագիտարանի գիտական ղեկավար է նշանակ-

վում Հենինգրադի համալսարանի պրոֆեսոր, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Հ. Համբարձումյանը: Հենց այդ ժամանակ Աստղադիտարանը էնինգրադի համալսարանի արհեստանոցներում պատվիրում է ոոր, 16-դյումանոց աստղադիտակ, որի կառուցումն ավարտվում է 1941 թ. Հունիսին: Սակայն ֆաշիստական Գերմանիայի անակնկալ հարձակումը մեր երկրի վրա խափանում է գործիքի փոխադրումը Երևան:

Այդ տարիներին որոշ աշխատանքներ են կատարվում Աստղադիտարանի աշխատակիցների գիտական մակարդակի բարձրացման, ինչպես նաև աստղադիտական կադրերի ստեղծման ուղղությամբ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ստեղծումից (1943 թ.) և այդ կապակցությամբ Վ. Հ. Համբարձումյանի Երեվանում մշտական բնակություն հաստատելուց հետո աստղադիտության, հատկապես աստրոֆիզիկայի զարգացման համար Հայաստանում ստեղծվում են համեմատաբար բարենպատ պայմաններ:

Ամենալուրջ խոշընդուռն այդ ճանապարհին մնում էր ժամանակակից գործիքներով հագեցված և աստրոֆիզիկական դիտումների համար անհրաժեշտ մթնոլորտային և կլիմայական պայմաններին բավարարող վայրում գտնվող աստղադիտարանի բացակայությունը:

1944 թվականին սկսվում են համապատասխան վայրի որոշները նոր Աստղադիտարանի կառուցման համար: Փորձնական դիտումների վրա հիմնված երկու տարրվա որոնումներից հետո ընտրումը է Աշտարակի շրջանի Բյուրական գյուղի շրջակայքը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ 1946 թվականին սկսվում է Բյուրականի աստղադիտարանի շինարարությունը՝ Արագած լեռան հարավային լանջին, Բյուրական գյուղից հարավ (Երևանից 30 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից շուրջ 1500 մ բարձրության վրա):

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱԿՆ

Բյուրականի աստղադիտարանի շինարարությանը զուգընթաց 1946 թվականից զգալի աշխատանքներ են կատարվել գիտական կադրերի պատրաստման և դիտողական բազայի ստեղծման ուղղությամբ:

Սկզբնական շրջանում դիտողական աշխատանքի սահմանափակ հնարավորությունների հետևանքով ծանրակշիռ գիտական հետազոտություններ կատարվում էին միայն տեսական աստրոֆիզիկայի և վիճակագրական աստղագիտության բնագավառում։ Սակայն աստիճանաբար շարք են մանում դիտողական նոր գործիքներ, անսական ու վիճակագրական հետազոտություններն ուղեկցվում են դիտողական աշխատանքներով, որոնց նշանակությունը և կշիռը Աստղադիտարանի գիտական գործունեության մեջ տարհցարի աճում է։

Առաջին դիտողական գործիքը՝ 5 դյուլմ տրամագծով կրկնակի աստրոգրաֆը, Բյուրականում տեղակայվել է 1946 թ. մայիսին։ Այդ աստղադիտակի օգնությամբ կատարվել են գործիքական աստղերի երկպայմանի լուսանկարչական դիտումներ, ինչպես այդ աստղերի, այնպես էլ միջասաղային կրանող նյութի ֆիզիկական ուսումնասիրության նպատակով։

Նույն թվականին Լենինգրադից ստացվում և տեղակայվում է երեսնի Աստղադիտարանի կողմից մինչև պատերազմը պատմյուրված 16-դյուլմանոց դիտակը (Կասերընի և Շվարցիլդի ֆոկուսներով)։ Մակայն դորժիքի օպտիկայում հայտնարկված որոշ թերությունների շակման նպատակով հաջորդ տարին այն կրկնին վերադրվում է Լենինգրադու։

1948 թվականի ամռանը հավաքվում և տեղակայվում է Շմիդտի սիստեմի առաջին աստղադիտակը (մուտքի բացվածքը՝ 8 դյուլմ, իսկ հայելու տրամագիծը՝ 12 դյուլմ), որի միջոցով կատարված դիտումները կարևոր դեր խաղացին աստղակույտների ուսումնասիրության տեսակետից։

Մեծ աստղադիտակների բացակայությունը Բյուրականում մասամբ փոխատուցվում էր յուրօրինակ կոնստրուկցիաներ ունեցող դիտողական գործիքների միջոցով։

1949 թվականին տեղակայվում են այդպիսի երկու գործիք՝ 10-դյուլմանոց հայելիավոր դիտակ-սպեկտրոգրաֆը՝ աստղերի կարճալիքային (ուլտրամանուշագույն) ճառագայթման ուսումնասիրության համար, և հզոր ներուզյար սպեկտրոգրաֆը՝ միգամածությունների սպեկտրների հետազոտության համար։

Այդ գործիքների և Շմիդտի սիստեմի աստղադիտակի օգնությամբ կատարվում են կարևոր նշանակություն ունեցող աստրոֆիզիկական հետազոտություններ, հատկապես, 1947 թվականին Բյուրականում հայտնագործված նոր տիպի աստղային սիստեմների՝

աստղասփյուռների ֆիզիկական ուսումնասիրության ուղղությամբ:

1950 թվականին Լենինգրադում և տեղակայվում է վերակառուցված 16-դյույմանոց աստղադիտակը, որն օգտագործվում է էլեկտրաֆուտոմետրիկ դիտումների համար՝ աստղերի և միգամածությունների գումաշափական ու բևեռաշափական ուսումնասիրության նպատակով:

1952 թվականին շարք է մտնում Աստղադիտարանում կառուցված նոր 6-դյույմանոց կրկնակի աստրոգրաֆը «Ճեյս»-ի օբյեկտիվներով՝ փոփոխական աստղերի գումաշափական դիտումների համար:

1954 թվականին տեղակայված Շմիդտի սիստեմի 21 դյույմանոց աստղադիտակը հնարավորություն տվեց ձեռնարկել արտադրակտիկ միգամածությունների կառուցվածքի և ճառագայթման առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Ինչպես Բյուրականի աստղադիտարանի, այնպես էլ սովետական աստղադիտության կյանքում նշանակալից իրադարձություն էր Շմիդտի սիստեմի, իր մեծությամբ աշխարհում երկրորդ, մետրանոց աստղադիտակի տեղակայումը Բյուրականում 1960 թվականի ուշ աշնանը¹. Այն լայն հնարավորություններ է ստեղծում մինչև այժմ եղած գործիքների համար անմատչելի հեռավոր աստղային սիստեմների, թույլ աստղերի և միգամածությունների ուսումնասիրության համար:

Սկսած 1950 թվականից Բյուրականի աստղադիտարանում դգալի զարգացում է ապրում նաև ուղիուաստղագիտությունը: Բնականաբար, առաջին տարիներին հիմնական ուշադրությունը նվիրվում է ուղիուաստղագիտակների կառուցմանը և դիտումների մեթոդների մշակմանն ու կատարելագործմանը:

Առաջին ուղիուաստղագիտական դիտումը (Արեգակի ուագիոնառագայթման) կատարվում է 1951 թվականին, Յ մ տրամադրությարարության հայելիավոր անտենա ունեցող դիտակի օգնությամբ՝ 50 սմ երկարության ալիքներում:

1952 թվականին սկսում է գործել կոսմիկական ուղիուառագայթման կետային աղբյուրների դիտումների համար կառուցված ինտերֆերենցիոն ուղիուաստղագիտակը՝ 4,2 մ ալիքներում:

1 Այդ դիտակի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1961 թ. մայիսի 8-ին, ՍՄԿՊ Կենտրոնի Առաջին քարտուղար և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ն. Ս. Խրուչչովի այցելության ժամանակ:

Հնոտավայում՝ կառուցվում են մի շարք նոր սաղիոսասազագիւակներ (մեծ մասամբ ինտերֆերնցիոն) կետային աղբյուրների, ինչպես նաև Արևակի սաղիոնասազայթման ուսումնասիրության համար՝ մետրանոց և գեցիմետրանոց ալիքներում:

Ռադիոսասազագիւական հետազոտություններն աստիճանաբար կենտրոնացվում են Առաջադիմարանի՝ Բլուրական գլուզից հյուսիս կառուցված Սարավանդի սաղիոսասազագիւական կայանում, որը շարք է մտնում 1959 թվականին:

1957 թվականին Սարավանդի կայանում սկսվում է մետրանոց ալիքների համար նախադիմած, ՍՍՌՄ-ում ամենախոշոր, 4500 մ² ընդհանուր մակերեսու ունեցող պարաբոլիկ դանաշին անտենաներով օժաված ինտերֆերնցիոն սաղիոսասազագիւակի կառուցումը, որը կանոնավոր շահագործման հանձնվեց 1950 թվականին: Խույն թվականին ավարտվեց մի այլ, փոփոխական բազուկ ունեցող, ինտերֆերնցիոն սաղիոնիակի կառուցումը՝ գեցիմետրանոց ալիքների համար:

Ռադիոսասազագիւակների, ինչպես նաև առարողիոդիկական ու սաղիոնիկական նոր նույր սարքերի ստեղծման ուղղությամբ Հիմնական աշխատանքները կատարվել են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բլուրականի Սպառբաշխնության լարորատորիայի կողմից:

Ժամանակակից զիտողական գործիքներով Աստղագիւարանը զինելու հետ զուգահեռ զգալիորեն աճում է զիտական կոլեկտիվը, բարձրանում զիտական հետազոտությունների մակարդակը: Մեծ ուշագրություն է նվիրվում զիտական լարորատորիաները կատարելագործված, ճշգրիտ շափողական գործիքներով՝ ապահովելուն, աստրոֆիզիկական հետազոտությունների նորագույն մեթոդների յուրացմանը, ներդրմանը, ինչպես նաև նորերի մշակմանը:

Աստղագիւարանի աշխատանքներում հատուկ տեղ է գրավվում երիտասարդ մասնագետների պատրաստման գործը: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ Երևանի Պետական համալսարանում 1949 թվականից աստրոֆիզիկայի բաժնի կազմակերպումը:

Աստրոֆիզիկական հետազոտությունների ընդլայնումը՝ 1951 թվականին հանգեցնում է Աստղագիւարանում մասնագիտական բաժինների կազմակերպմանը՝ աստղաբաշխության, սպեկտրոսկոպիայի (ներկայումս աստղերի ու միգրամածությունների ֆիզիկայի) և սաղիոսասազագիւական համար կազմակերպվում

է ևս երկու բաժին՝ ուղղոփիզիկական մեթոդների և սպասքաշինության:

Մեղիոփիզիկական և ուղղուաստղագիտական աշխատանքների աճող պահանջներից ենելով, 1960 թվականի երկրորդ կեսին Աստղադիտարանի ուղղուաստղագիտության և ուղղոփիզիկական մեթոդների բաժինների բազայի վրա Գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծվում է Մեղիոփիզիկայի և Էլեկտրոնիկայի ինստիտուտ:

Բյուրականի աստղադիտարանի գործունեության առաջին իսկ օրվանից գիտա-հետազոտական աշխատանքների պլանի հիմքում դրվում է Գալակտիկայի կառուցվածքի պրոբլեմը:

Սկսելով այդ կարևոր պրոբլեմից, Աստղադիտարանը համեմատաբար կարծ ժամանակամիջոցում, հետազոտությունների բնական զարգացման հետևանքով, գիտական լուրջ հաջողությունների հասավ ժամանակակից աստրոֆիզիկայի ամենատարբեր ճյուղերում: Այդ հաջողությունները պայմանավորված էին նաև և առաջ այն բանով, որ Աստղադիտարանը ձգտում էր լուծել հրատապ գիտական խնդիրներ: Նրանցից յուրաքանչյուրի լուծումից հետո հնարավորություն էր ծագում առաջ քաշել և լուծել նոր, առաջնահերթ խնդիրներ: Աստղադիտարանի գիտական դրդունեության համար բնորոշ այդ նպատակասլացության և հետեւղականության մասին ակնառու կերպով վկայում է Աստղադիտարանում կատարված աստրոֆիզիկական հետազոտությունների ամբողջ ընթացքը:

Այսպես, օրինակ, Գալակտիկայի կառուցվածքի ուսումնասիրության համար շափազանց կարևոր էր միջաստղային կլանող միջավայրի հետազոտությունը: Կլանող միջավայրի առկայության պատճառով աստղերի, միգամածությունների, նրանց պայծառությունների տեսանելի բաշխումները խստ տարբերվում են իրական բաշխումներից: Տեսանելի բաշխումներից իրական բաշխումներին անցնելու համար անհրաժեշտ է գիտենալ միջաստղային կլանող նյութի տարածական բաշխումը, նրա ֆիզիկական ու երկրագավական հատկությունները, լույսի միջաստղային կլանման օրենքը:

Բյուրականի աստղադիտարանի առաջին աշխատանքները նվիրված էին հենց այդ խնդիրների լուծմանը: Այդ աշխատանքները շուտով հանգեցրին Գալակտիկայում տարբեր ֆիզիկական դասերի աստղերի իրական տարածական բաշխման օրինաշափությունների բացահայտմանը:

Պարզվեց, որ որոշ դասերի առավեր հանդիպում են զերազանցանին ֆիզիկական խմբերի ձևով։ Աստղերի տարածական բաշխման այդ սուսնձնաւահերթյան խոր ուսումնասիրությունը, նրանց ֆիզիկական համակարգության հետ ունեցած նրա սերտ կապի լույսի տակ, հիմք ծառացնեց գիտական և աշխարհայնցողական մեծ նշանակություն ունեցող հայտնագործման՝ աստղասփյուների հայտնագործմանը։

Աստղադիտարանի գործունեության հետադարձարգացումը, մեծ մասամբ, կանխարացվեց այդ հայտնագործմամբ։ Աստղասփյուների, նրանց կազմում դիտող աստղերի և միզամածությունների հետագառությունները հիմնական աել էին գրավում Աստղադիտարանի աշխատանքներում։ Աստղասփյուների ուսումնասիրության գործում Բյուրականի աստղադիտարանը վճռական դեր խաղաց։

Աստղասփյուներ կազմով աստղերը երիտասարդ գոյացումներ են, և զետես չեն հասել կայսոն, համասարակշին վիճակների։ Այդ է պատճառը, որ նրանց մինուրաններում և արտաքին շերտերում տեղի են ունենում զարդացման հետ կապված բուն պրոցեսներ։

Այդ փաստը ելակետ հանդիսացավ Աստղադիտարանի այն հետագառությունների համար, որոնք նվիրված էին ֆիզիկական անկայուն (ոչ ստացիոնար) աստղերի և նրանց հետ կապված միզամածությունների ուսումնասիրությանը։ Մի շաբթ կարենոր գիտական արդյունքներ, որոնք հետևանք են այդ ուսումնասիրության, վերաբերում են աստղային էներգիայի աղբյուրների պրոբլեմին։

Ինչպես պարզվեց այդ աշխատանքներով, որոշ անկայուն գոյացումների համար բնորոշ է ուսղիութիրներում ուժեղ հառագայթման հատկությունը։

Հենց այդ կապակցությամբ էր, որ Աստղադիտարանում անհրաժեշտ պարբաններ ստեղծվեցին ուսղիուածղագիտական հետագառությունների զարդացման համար։

Կոսմիկական ուսղիուածղայթման աղբյուրներ են մի շաբթ աստղային սիստեմներ՝ գալակտիկաներ, որոնք դիտվում են մեծ հեռավորությունների վրա։ Այդ փաստից ենելով, Աստղադիտարանում աշխատանքներ ծավալվեցին արտաքին դաշտականների բազմակողմանի ուսումնասիրության ուղղությամբ։

Աստղադիտարանում ստացված գիտական արդյունքները վկայում էին այն մասին, որ որոշ դեպքերում անկայուն աստղերի,

նրանց հետ կապված, այսպես կոչված, գիսավորածև միզամածությունների, ինչպես նաև մի շաբթ արտադալակակոտիկ գոյացումների ճառագայթումը ջերմային բնույթի չէ և պայմանավորված է նյութի, գիտությանն առաջժմ անհայտ, հավանաբար գերխիտ վիճակի համակություններով:

Վերջին երկու տարում տեսական հետազոտություններ կատարվեցին աստղերի հնարավոր գերխիտ հավասարակշիռ վիճակների ուսումնասիրության գծով, որոնք հանգեցրին հիպերոնային-բարիոնային աստղերի տեսության մշակմանը:

Միջաստղային կլանող նյութի, աստղերի ու միզամածությունների գիգիկայի, աստղերի ու աստղային սիստեմների կառուցվածքի, առաջացման ու զարգացման պրոպեկտներին նվիրված իր հետազոտությունների շնորհիվ Բյուրականի աստղադիտարանը դուրս եկավ աշխարհի առաջավոր աստղադիտարանների շաբթը և արժեքավոր ավանդ մտցրեց համաշխարհային գիտության մեջ՝ Ներկայումս Աստղադիտարանն զգալի դեր է խաղում աստրոֆիզիկայի զարգացման գործում:

Աստղադիտարանի գործունեության ծավալման հանապարհին հիմնական արգելակը տարիներ շարունակ եղել է դիտողական գործիքների ոչ բավարար հզորությունը. Այդ կապակցությամբ մեծ ուշադրություն է նվիրվել Աստղադիտարանը խոշոր դիտակներով զինելու հարցին. Այդ ճանապարհին ամենախոշոր հաջողությունները ձեռք են բերվել միայն ամենավերջին ժամանակներս, երբ Բյուրականում անդադրվեցին Շմիդտի սիստեմի մետրանոց աստղադիտակը և ՍՍՌ-ում առաջժմ ամենախոշոր ինտերֆերենցիոն ռադիոաստղադիտակը. Այդ բանը, անկասկած, վճռական նշանակություն կունենա աստրոֆիզիկայի ամենահրատապ խնդիրների լուծման գործում Աստղադիտարանի դերի համապատասխան համար:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Լույսի ցրման տեսություն.—Գործնական և տեսական լայն կիրառություններ ունի պղտոր միջավայրում լույսի ցրման նոր տեսությունը: Լույսի ցրման խնդրի նախկինում տրված բոլոր լուծումներն ստացվում էին չափազանց բարե ինտեղրալ հավասարումներից և միայն մոտավոր էին: Նոր տեսության մեջ պղտոր միջավայրում լույսի ցրման խնդրի լուծման հիմքում դրվեց այդ

նպատակով ձեռիկերպված, այսպես կոչված, ինվարիանտության սկզբանքը՝ Ինվարիանտության սկզբանքի կիրառմամբ լույսի ցրման խնդիրը բերվեց սրբության կամացարության ների սիստեմի, որն ունի ճշգրիտ և լրիվ լուծում:

Խնքը՝ ինվարիանտության սկզբանքը հղոր միջոց հանդիսացավ մոլորակների, աստղերի և Արեգակի մինչորդաների հատկությունների հետ կապված խնդիրների լուծման համար:

Ինվարիանտության սկզբանքը լայնորեն օգտագործվեց լույսի բաղմապատիկ ցրման գծով ՍՈՒԵՄ-ում և արտասահմանում կատարված մի ամբողջ շարք հետազոտությունների համար, որոնք կարեվոր գործնական կիրառություններ գտան ասարաֆիզիկայում, ֆիզիկայում և գետիգիրկայում: Ինվարիանտության սկզբանքը հետաքրքիր կիրառություն ունեցավ՝ նաև Բյուբականում մշակված ֆլյուկատացիաների ահսության մեջ:

2. Ֆլյուկատացիաների տեսություն.—Միջաւագային կլանով նյութի կառուցվածքի և հատկաթյունների ուսումնասիրության շատ էֆեկտիվ միջոց հանդիսացավ երկնակամարի վրա աստղերի և արտագալակտիկ միզամածությունների տեսանելի բաշխման, Երր Կամինի պայծառության բաշխման մեջ դիմուող ֆլյուկատացիաների տեսությանը: Այդ անսության հիմքը կազմում է հետեւալ գաղափարը: Աստղերի ու արտագալակտիկ միզամածությունների, ինչպես նաև Միք Կամինի պայծառության բաշխման, Գալակտիկայի և Միատպալակտիկայի կառուցվածքի ընդհանուր առանձնահատկություններով պայմանավորված շեղումները՝ հավասարաշափ բաշխմությոց պեսք և արտահայտվեն ամբողջի գալակտիկ կոորդինատներից կախված բավական սահուն վոփոխաւթյուններով: Մինչդեռ Գալակտիկայում աստղերի, Միատպալակտիկայում գալակտիկաների ֆիզիկական սիստեմների առկայությամբ, ինչպես նաև միջաստղային կլանող նյութի պատառաձև՝ ամպաձև կառուցվածքով պայմանավորված զգալի շեղումներ՝ հավասարաշափ բաշխմությոց դիմուում են նաև երկնակամարի միևնույն տիրուցի սահմաններում:

Այդ վերջին հանդամանքով, Գալակտիկայում կլանող նյութի ամպաձև կառուցվածքով, պայմանավորված շեղումների՝ ֆլյուկատացիաների տեսությունը թույլ տվեց մի կողմից՝ բացահայտել աստղերի և գալակտիկաների տարածական բաշխման ընդհանուր առանձնահատկությունները և մյուս կողմից՝ պարզել միջաստղային կլանող նյութի կառուցվածքը: Այդ տեսության կիրառումը դիտու-

ղական տվյալների նկատմամբ հնարավորություն տվեց որոշելու միջաստղային կլանող միջավայրը կազմող, առանձին մութ միգամածությունների՝ ամպերի ֆիզիկական և երկրաշափական պարամետրերը (միջին չափեր, կլանման միջին ունակություն և այլն):

Ֆլյուկտուացիաների տեսությունը Բյուրականի աստղադիտարանում հետաքայում զարգացվեց աստղերի և գալակտիկաների տարածական բաշխման մեջ եղած բնական ֆլյուկտուացիաների ու Գաղակահիկայում ցրված լույսի հաշվառման իմաստով: Այն զգակի նշանակություն ունեցավ Գալակտիկայի կառուցվածքի և նրա ներսում տարբեր ֆիզիկական դասերի գոյացումների բաշխման օրինաշափությունների ուսումնասիրության տեսակետից: Այդ տեսությունը շատ հետևորդներ ունի մեր երկրում և արտասահմանում:

3. Աստղասփյուռներ.—Գալակտիկայում և սպիրալաձև այլ գալակտիկաներում նոր տիպի աստղային խմբավորումների՝ աստղասփյուռների հայտնագործումը կարևոր ելակետ հանդիսացավ աստղերի ու աստղային սիստեմների առաջացման և զարգացման հարցերի քննարկման ու լուծման համար, ուժեղացրեց աստղային կոսմոգոնիայում մատերիալիստական ուղղությունը:

Աստղասփյուռների բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա մշակված այդ տեսությունը շափականց բեղմնավոր դուրս եկավ ու բազմաթիվ կիրառություններ գտավ սովետական և արտասահմանյան գիտնականների՝ աստղային կոսմոգոնիային և Գալակտիկայի կառուցվածքին նվիրված բազմաթիվ հետազոտություններում:

Աստղասփյուռների տեսությունը հանգեցրեց աստղերի և աստղային սիստեմների առաջացման ու զարգացման հետ կապված միշտը հարցերի լուծմանը: Աստղասփյուռների տեսության ամենակարևոր և աշխարհայեցողական նշանակություն ունեցող արդյունքը՝ Գալակտիկայում աստղառաջացման պրոցեսի շարունակական բնույթի վերաբերյալ եզրակացությունն է, որը հիմնվում է աստղասփյուռների դինամիկական անկայունության և երիտասարդության մասին, դիտումներով հաստատված, պատկերացման վրա: Աստղասփյուռների դինամիկական անկայունությունից բխող նրանց լայնացման և հետագա քայլայման երևույթի տեսական կանխագուշակումը, այդ երևույթի հետագա դիտողական ապացույցների լույսի տակ, գիտական կանխագուշակման լավագույն օրինակներից մեկն է:

Կարեոր գիտական նշանակություն ունի նաև աստղադաշտցաց-ձան պրացեսի խմբական բնալիքի վերաբերյալ և դրակացաթյունը, որի համաձայն աստղասփյուններում աստղերը ձևավորվում են խմբերով՝ կրկնակի, եաւ կի և բազմակի աստղերի, աստղաշղթա-ների և բաց աստղակույտերի ձևով:

Եաւ խոսառունալից էր գիտության մեջ Օրիոնի Տրապեցիալի տիտի բազմակի աստղերի և աստղաշղթաների, աստղերի այդ ան-հայտն, քայլայվող ֆիզիկական խմբավորումների, գոգափարի ներբուծութիւն:

Ուստինասիրությունը ցույց է տվել, որ այն պատճերացումը, որի համաձայն աստղասփյունները ձևավորվում են դիմուդ նշութից, ի վիճակի չեւ բացարելու աստղասփյունների լայնացման երե-վայըթից:

Ուստի աստղասփյունների տեսությունը ենում է այն պատճե-րացումից, որ աստղերն աստղասփյուններում ձևավորվում են, այսպիս կոչված, նախաստղերի ճեղքման հետեւանքով, որից հետո նրանք հետանաւմ են իրարից ճեղքման ժամանակ ձեռք բերած արա-դություններով: Ենթադրվում է, որ նախաստղերը նշութի վերիսիտ գոյածներ են, որոնք չեն դիմում իրենց փոքր շափերի և մակե-րեսութային ցածր պայծառության շնորհիվ:

4. Ապիտակ թզուկներ և աստղերի գերխիտ գոյաձեւեր.—Նշու-թի մեծ խոտություն ունեցող, այսպիս կոչված, սպիտակ թզուկ աստղերի հայտնաբերման նպատակով Համբարձումյան-Շախնի մեթոդի գործնական կիրառումը զգալի նվաճում էր: Այդ մեթոդի կի-րառման շնորհիվ վերջին տարիներին Աստղադիտարանում հայտ-նաբերվել է ավելի քան 200 սպիտակ թզուկներ, մինչդեռ, շուրջ երեք տասնամյակում, աշխարհի բոլոր աստղադիտարաններում հայտ-նաբերվել էր այդ տիպի ընթացմանը 100 աստղեր: Առանձնա-հատուկ հետաքրքրություն է ներկայացնում սպիտակ թզուկներից կազմված առաջին աստղակույտի հայտնագործումը Քնարի հա-մաստեղության մեջ: Այդ հայտնագործումը նոր հնարավորություն-ներ է բացում աստղային կոսմոգոնիայի պրոբլեմների լուծման համար:

Աստղասփյունների, ինչպես նաև գալակտիկաների գիշեկա-կան խմբերի լայնացման և քայլայման երեսությը վկայում է Բյու-րականում մշակված այն պատճերացման օգտին, որի համաձայն երկնային մարմինների ու նրանց սիստեմների առաջացումը և դարդացումը ընթանում է նյութի խիտ վիճակներից դեպի նոսր

վիճակները կատարվող անցումներով: Այդ տեսակետից կարևոր են այն արդյունքները, որոնք վերաբերում են կոսմիկական զանգվածների հնարավոր գերխիտ գոյաձևերին:

Գիտությանը ներկայումս հայտնի կոսմիկական ամենախիտ դրացումները սպիտակ թղուկներն են, որոնց նյութը հիմնականում կազմված է ատոմային միջուկներից և աղատ էլեկտրոններից: Ավելի մեծ խտությունների դեպքում նյութի հնարավոր գոյաձևերը հիմնականում պետք է կազմված լինեն նեյտրոններից (նեյտրոնային աստղեր):

Բյուրականում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ երբ տարրական մասնիկներից կազմված այլասերված դաղի խտությունն անցնում է միջուկների սեփական խտությունից, գազում պետք է առաջանան հիպերոններ: Գաղի խտության հետադա աճի ժամանակ հիպերոնների թիվն սկսում է գերազանցել նեյտրոնների ու պրոտոնների թվին: Մինչդեռ երկրային պայմաններում հիպերոնների կյանքի տևողությունը շնչին $\approx 10^{-10}$ վրկ., պարզվում է, որ գերխիտ այլասերված գազում նրանք պետք է կայուն լինեն: Հակառակ դեպքում նրանց քայլայումը կհագեցներ Պառվիի սկզբունքի խախտմանը:

Ուսումնասիրության են ենթարկվել գերխիտ այլասերված դաղի հաավարակշիռ կոնֆիգուրացիաները, այդ գազում հիպերոնների կալունացման երկույթի հաշվառմամբ: Պարզվել է, որ սկսած որոշ զանգվածծից, գերխիտ աստղի զանգվածծի զգալի մասը կազմում են հիպերոնները:

5. Բազմակի աստղեր, աստղաշղթաներ և աստղակույտեր: — Աստղասփյուսներում աստղառաջացման սրոցեսի խմբական բնույթի լույսի տակ զգալի հետաքրքրություն են ներկայացնում բազմակի աստղերը և աստղակույտերը: Ցույց է տրված, որ երիտասարդ աստղերը գերազանցապես հանդիպում են նման սիստեմների կազմում: Մյուս կողմից՝ Տրապեցիայի տիպի բազմաստղերի և աստղաշղթաների, ինչպես նաև որոշ աստղակույտերի բազմակողմանի ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ այդ սիստեմները իրոք անկայուն են և կազմված են երիտասարդ աստղերից:

Բացահայտվել են բաց աստղակույտերի կառուցվածքի, տարրածական բաշխման և միգամածությունների հետ ունեցած կապի մի շարք առանձնահատկությունների: Ցույց է տրված, որ բաց աստղակույտերի կառուցվածքային-ձևաբանական տուանձնահատկու-

թյունների և նրանց կազմում գիտվող ասաղերի ֆիզիկական հայտանիշների միջև զոյտիքուն անի սեբա կապը Մյուս կողմից՝ աստղակույտերի կառուցվածքային-ձևաբանական առանձնահատկությունները, մեծ մասամբ, որոշվում են այդ խմբերի պայծառ անդամներով։ Վերջիններիս սպեկտրալ դասերի և հիշյալ կապի հիման վրա մշակվել է բաց աստղակույտերի նոր դասակարգում, որը նպաստել է աստղակույտերի բնույթին, հասակին և էվոլյուցիային վերաբերող մի շաբթ խնդիրների լուծմանը։

Որոշվել է կրկնակի աստղերի հայտնաբերման հավանականությունը և նրա օգնությամբ, Գալակտիկայի դիասմանների համար մատչելի մասում, կրկնակի աստղերի հավանական քանակը Հետազոտվել են կրկնակի աստղերի բաշխման ֆունկցիաներն ըստ կոմպոնենտների տարրեր հատկանիշների։ Ցուց է արգած, որ կրկնակի աստղերի շառավիղը-վեկտորների բաշխումն ըստ ուղղությունների՝ տարածության մեջ հավասարաշափ է։ Վոլֆ-Ռայի աստղերի վիճակադրական ուսումնասիրությունը ցուց է ավել, որ նրանց ճնշող մեծամասնությունը կրկնակի է։

6. Աստղային մբնուրացների ֆիզիկա.—Կատարվել են աստղասփյուններում և նրանցից գործ գանգող շերժ հակա և գերհսկա աստղերի սպեկտրալ հետազոտություններ, մասնավորապես սպեկտրի ուլտրամանուշակագույն մասում։ Այդ աստղերի անընդհատ հառափայթման բաշխման և սպեկտրալ զծերի շափումների հիման վրա որոշվել են նրանց մինուրանների վիճակն ու կառուցվածքը բնութագրող մի շաբթ կարևոր պարամետրեր (սպեկտրոֆուտոմետրիկ գրադինաններ՝ սպեկտրի լուսանկարչական և ուլտրամանուշակագույն մասերում, Բալմերյան թռիչքի մեծություն, համասեռ մինուրատի հաստություն, ջրածնի ատոմների քանակ և այլն)։ Այդ հետազոտությունների արդյունքների հիման վրա ստացվել են լուրջ փաստարկներ հիշյալ աստղերի անկայունության վերաբերյալ, աստղասփյունների տեսությունից բխող, պատկերացման օդադին։

Բազմակողմանի սպեկտրալ ուսումնասիրության են ենթարկվել նաև յուրահատուկ հետաքրքրություն ներկայացնող մի շաբթ անկայուն աստղեր (ԱԳ Վիշապի, Յ Պերսեյի, 59 Կարապի, Ն Կառուավարի և այլն)։

Ստացված արդյունքներն զգալի հետաքրքրություն են ներկայացնում անկայունության բնույթի և պատճառների բացահայտման տեսակետից։

7. Միգամածությունների ֆիզիկա.—Քննարկված են միջաստղային նյութի դինամիկայի մի քանի հարցերը թույց է տրված, որ չերմ աստղերի անմիջական մոտակայքում ճառագայթման ճնշումը գերազանցում է աստղի ձգողական ուժին, որի հետևանքով բացառվում է միջաստղային նյութի բռնագրավման (ակրեցիայի) հնարավորությունը լուսոլորտի 7000 և ավելի բարձր չերմաստիճան ունեցող աստղերի համար։

Հետաքրքիր արդյունքներ են ստացվել հիդրոդինամիկայի մեթոդների կիրառմամբ մոլորակածեւ միգամածությունների նկատմամբ։ Տրված է մի շարք միգամածությունների մոտ դիտվող կրկնակի թաղանթների առաջացման տեսական բացարդությունը։ Ստացված է որոշ տիպերի աստղերի շուրջը գոյություն ունեցող դաղային թաղանթների (մոլորակածեւ միգամածություններ, նոր և գիրնոր աստղերի թաղանթներ և այլն) կայունության հայտանիշը։ Մշակված է մոլորակածեւ միգամածությունների նոր դասակարգում, որը ենում է նրանց կառուցվածքից և ֆիզիկական առանձնահատկություններից։ Այդ դասակարգման հիման վրա ըննարկված են մոլորակածեւ միգամածությունների էվոլյուցիայի հարցերը։

Ստացված են մի շարք տվյալներ, որոնք վկայում են մոլորակածեւ միգամածություններում մագնիսական դաշտերի առկայության մասին։ Մոլորակածեւ միգամածությունների ձևաբանական առանձնահատկությունները հետազոտվել են նրանց մագնիսական դաշտերի ազդեցության լույսի տակ։

Գիսավորածեւ միգամածությունների լուսարձակման որոշ առանձնահատկություններ բացատրվել են մագնիսական դաշտերում ռելատիվիստական էլեկտրոնների սինխրոտրոն ճառագայթման միջոցով։

8. Լույսի միջաստղային կլանում և քենուացում։—Գալակտիկական ցեֆեկոնների երկգույնանի լուսանկարչական դիտումների հիման վրա որոշված են Գալակտիկայում տարբեր ուղղությունների ու տարբեր հեռավորությունների վրա լույսի ընտրողական և ընդհանուր կլանման մեծությունները։

Որոշվել է նաև միջաստղային կլանման օրենքը, ինչպես նաև նրա վարքը Գալակտիկայի հարթությունից տարբեր հեռավորությունների վրա։ Պարզվել է, որ միջաստղային կլանման օրենքը, միջին իմաստով, Գալակտիկայում ամենուր նույնն է։

Աստղադիտարանում կատարված աշխի ընկնող հայտնագործություններից է աստղերի լույսի քենուացման երեսութիւն հայտնագոր-

ծումը 1949 թվականին (ամերիկյան գիտնականներից անկախ): Այն սկզբու դրեց մեր հրկում ասազերի և միգամածությանների ճառագալթման րեսաշտափական ուսումնաժողությանը, որը հանդեցրեց մի շաբթ կարեւոր արդյունքների: Հիշատակության արժանիք են Խեցեանաձեւ միգամածության և մի շաբթ գիտափորաձեւ միգամածությունների րեսաշտափական հետազոտությունները, որոնք հաստատում են այդ գոյացումների լուսաբակմտն մեխանիզմի առանձնահատուկ բնույթի:

Միգամածակ ստացված են փաստարկներ այն պատկերացման օգտին, որի համաձայն ասազերի լույսի բնուացումը, հիմնականում, պարզանագործած է միշտազային կանող միշտավայրութիւն:

9. Աստղային էներգիայի ազբյուններ.— Ուսումնասիրության են հնիմարկված այն ֆիզիկական պրոցեսները, որոնք ուղղի են ունենում Դ Յուլի տիպի փոփոխական ասազերի և նրանց հարազ մի շաբթ այլ անկայուն ասազերի մինուրատներում: Յույց է տրված, որ գերազանցապես ասազափոյտների կազմում դիտվող այդ ասազերի պարձառության (ճառագալթման էներգիայի քանակի) անկանոն փոփոխությունները պարզանագործած են նրանց արտաքին, մակերեսութային շերտերում ներառագային էներգիայի անմիջական ազատագրման պրոցեսներուի: Այդ պրոցեսներն ուղեկցվում են նոր ատոմային միջուկների առաջացմամբ, որոնք շատ հիման անկայուն են: Հիշյալ պրոցեսներն իրենց բնույթով արմատապես տարիներում են շերմային ճառագալթման պրոցեսներից, ինչպես նաև շերմամիջուկային ճառագալթման պրոցեսներից: Դիտողական տվյալները վկայում են այն մասին, որ այդ ձևով ճառագալթվող էներգիան ստացվում է ոչ թե ասազի արտաքին շերտերում կենտրոնացված էներգիայի պաշարներից, այլ արտաքերված է ատոմի ներքին շերտերից, առաջմ անհայտ բնույթի մեխանիզմի միջոցով: Որոշ գելքերում այդ լրացուցիչ էներգիայի աղատագրման պրոցեսը շատ կարճատև է:

Խիստ համանական է այդ պատկերացումների հիման վրա մշակված այն տեսակետը, որի համաձայն Հիշյալ պրոցեսները կապված են անկայուն ասազերի ներքին շերտերում նյութի, իրենց բնույթով գիտությանն անհայտ՝ դոյաձեւերի ներկայության հետ, որոնք իրենցից ներկայացնում են նախաստղային նյութի մնացորդներ: Անցումը նյութի նախաստղային վիճակներից դեպի աստղային վիճակները, հավանաբար, հենց պայմանավորում է հսկայա-

կան հզորության անկանոն փոփոխությունները՝ անկայուն աստղերի ճառագայթման մեջ:

Աստղերի արտաքին շերտերում ներառումային էներգիայի անմիջական ազատագրման երևույթը, որը կապված է նյութի երկրային պայմաններում անհասանելի և առաջժմ անհայտ վիճակների հետ, հակայական գիտական հետաքրքրություն է ներկայացնում:

10. Արտաքին գալակտիկաներ և բազմազալակտիկաներ.— Փաստական նյութի հիման վրա ցույց է տրված, որ բազմագալակտիկաների մեջ գերակշռում են Օրիոնի Տրապեցիալի տիպի կոնֆիգուրացիաները, այսինքն դինամիկական տեսակետից անկայուն դոյցումները: Այդ հանգամանքը վկայում է հիշյալ սիստեմների երրուստարդության մասին:

Տրապեցիալի տիպի բազմագալակտիկաների և գալակտիկաների որոշ կույտերի բաղադրիչների տեսագծային արագությունների վերլուծությունը ցույց է տվել, որ նրանց մի մասը օգտված է դրական լրիվ էներգիայով, այլ կերպ ասած՝ ներկայացնում է ցըրվող սիստեմներ:

Ցույց է տրված, որ ռադիոգալակտիկաները գերնեղ կրկնակի սիստեմների են, իսկ նրանց ռադիոճառագայթումը պայմանավորված է զարգացման հետ կապված վիճակի բուն փոփոխություններով:

Կարևոր գիտական նշանակություն ունի կապույտ գալակտիկաների հայտնագործումը, որոնք դիտվում են էլիպտիկ գալակտիկաների արբանյակների և վիմագածքների ձևով: Այդ գոյացումների ճառագայթումը հիմնականում կենտրոնացված է սպեկտրի կարճալիքային մասում: Սակայն այդ երևույթը պայմանավորված է ոչ թե կապույտ գալակտիկաները կազմող նյութի բարձր շերժաստիճանով, այլ նրա արտասովոր վիճակով: Կապույտ գալակտիկաների առանձնահատուկ բնույթի մասին է վկայում նրանցից մեկի սպեկտրի նկարահանումը Պալոմարի աստղադիտարանում (ԱՄՆ) 5 մետրանոց դիտակով: Պարզվել է, որ այդ օբյեկտի ճառագայթումը մեծ մասամբ կենտրոնացված է ինացված թթվածնի արգելված:

Գալակտիկաների աշխարհում դիտվող մեծ մասշտարների անկայունության դրսևորումները (Տրապեցիալի տիպի սիստեմներ, ռադիոգալակտիկաներ, կապույտ գալակտիկաներ և այլն) հանդի-

սանում են դպրակտիկաների մաս ներկայումս շարանակվող կազմավորման և զարգացման երեսությունների արդյունքում:

Այդ եղանակացության լույսի առկ լուրջ հետաքրքրություն են ներկայացնում երկմիջուկ դաշտակիկաները: Այդ տիպի մի քանի դոյցացումներ հայտնաբերվել են Պալոմարի առասի քարտեզների վրա:

Գալակտիկաների կառուցվածքի, նրանց ներսում տարրեր տիպերի աստղային բնակչության բաշխման վերաբերյալ արժեքավոր արդյունքներ են ստացվել նուև նրանց գունաշափության օգնությամբ:

11. Խաղիսառարդիքիկա.—Կատարվել են կոսմիկական սպիտակապայման մի շաբթ կետային աղբյուրների, ինչպես նաև Արեգակի սաղիոնառապայման ինտենսիվությունների չափումներ արբեր ալիքներում: Հաջող դիտումներ են կատարվել Արեգակի խավարումների ժամանակ 1954 թ. և 1961 թ. Բյուրականում և 1959 թ. Հայնան կղզում (ԶժՈ): Արժեքավոր հետազոտություններ են կատարվել Արեգակի սաղիոնառապայման բնեուացման ուսումնասիրության վեցության գծով:

Մի շաբթ սպիտակապայման դիտումներ են կատարվել Միջազգային գետիֆիկական տարրա հատուկ ծրագրով:

Մշտիվել են սաղիոնառապայման կուտակման նոր մեթոդներ, որոնք հնարավորություն են տվել դիտումները տարածել թույլ կետային աղբյուրների վրա:

Վերջին ժամանակներս էնինդրադի դիտումականների հետ համատեղ աշխատանքներ են կատարվել էուանի սաղիոարձագանքի դիտումների կազմակերպման ուղղությամբ: Առաջին արդյունքները դուռացուցիչ են:

12. Տարբեր աշխատանքներ.—Բացի թիվարկված ուղղություններով կատարված հետազոտություններից, Հայաստանում մի շաբթ արժեքավոր աշխատանքներ են կատարվել աստղագիտության այլ բաժինների գծով: Հիշատակության արժանի են նոր աստղերի, Հրումասոնի Գերնորի, դիսավորների, Երկրի արհեստական արբանյակների և տիեզերական հրթիռների դիտումները: Հետաքրքիր արդյունքներ են ստացվել սովետական երկրորդ տիեզերական հըրթիռի կողմից արծակված նատրիումական ամպի՝ արհեստական դիսավորի դիտումներից:

Արհեստական արբանյակների և տիեզերական հրթիռների դիտումներում զդալի աշխանդ ունի Երևանի Պետական համալսարանի

գիտման կայանը, որի գիտողների լավագույն աշխատանքը բազմիցս նշվել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Աստղագիտական խորհրդի կողմից:

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Իր ստեղծման օրից Բյուրականի աստղագիտարանը մեծ աշխատանք է տարել սովետական և արտասահմանյան հարակից գիտահետազոտական հիմնարկների հետ գիտական կապերի և համագործակցության հաստատման ու զարգացման ուղղությամբ:

Ներկայումս Աստղագիտարանը սերտ գիտական կապեր է պահպանում սովետական և արտասահմանյան մի շարք աստղագիտարանների հետ:

Աստրոֆիզիկայի հրատապ պրոբլեմներին նվիրված համատեղ աշխատանքներ են կատարվում Լենինգրադի Պետական համալսարանի, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Գիտավոր (Պուլկովյան) և Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Աբասթումանի աստղագիտարանների հետ:

Զարգանում է գիտական համագործակցությունը Մոսկվայի Պետական համալսարանին կից Շտերնբերգի անվան Աստղագիտական ինստիտուտի և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Դրիմի Աստղագիտարանի հետ:

Գիտական աշխատանքի և դիտումների, ինչպես նաև գիտական պրոբլեմների քննարկման և կոնսուլտացիաների համար անցյալ տարիներին Բյուրականում եղել են Սովետական Միության և արտասահմանյան երկրների (Ֆրանսիա, Լեհաստան, Չժ՛՛, Անգլիա, Հունգարիա, Չեխոսլովակիա, Իռլանդիա, Հարավսլավիա, ԱՄՆ, Մեքսիկա, Ռումինիա, Ավստրիա, ԿԺ՛՛) շատ գիտնականներ:

Աստղագիտարանում տեղի են ունեցել մի շարք գիտական խորհրդակցություններ, սիմպոզիումներ և սեմինարներ սովետական ու օտարերկրյա գիտնականների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են աստղասիրունների (1951 թ.), աստղերի և միգամածությունների փիզիկայի (1955 թ. և 1960 թ.) հարցերը, 1956 թվականին, Աստղագիտարանի պաշտոնական բացման օրերին, Բյուրականում տեղի ունեցավ միջազգային խորհրդակցություն՝ նվիրված ժամանակակից աստրոֆիզիկայի ամենահրատապ պրոբլեմներից մեկին՝ անկայուն աստղերի պրոբլեմին:

Հիշյալ գիտական հավաքները վճռական նշանակություն են

տնեցել ինչպես քննարկված պրորեհմների վերաբերյալ պատկերացումների դարպացման, այնպես էլ այդ ուղղություններով հետազոտաթյունների հետագա ծավարձան տեսակետից՝ տմրող աշխարհում:

Նրանք միաժամանակ կարեռը գեր են խաղացել Հայաստանում ասարաֆիզիկայի գծով կատարվող գիտա-հետազոտական աշխատանքների ընդլայնման և դարպացման գործում:

Հայ աստղադիաներն իրենց հերթին ակտիվ մասնակցություն են տնեցել համամիտթիւնական և միջազգային շատ խորհրդակցությանների, սիմպոզիումների և համագումարների աշխատանքներին: Մասնավորապես սկսած 1948 թ., Միջազգային տուղարգիտական բոլոր համագումարներում նրանց գեկուցումներն ու հազորդումները միշտ եղիլ են մասնակիցների ուշադրության կենտրոնում:

Աստղադիաները 1946 թվականից սկսած հրատարակում էին «Հազորդումներ», որտեղ տպագրվում են գիտական հետազոտությունների հիմնական արդյունքները: Մինչև այժմ հրատարակվել է «Հազորդումների» 28 պրակ: «Հազորդումներում», ինչպես նաև ՍՍՌՄ և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների այլ պարբերական հրատարակական թյուններում, անցյալ տարիներին հրապարակվել է մի քանի հարյուր գիտական աշխատություն:

«Բյուրականի աստղադիտարանի Հազորդումներ»-ը, ինչպես նաև Աստղադիտարանի այլ հրատարակություններ, փոխանակման կարգով ուղարկվում են շորոշ 500 հասցեով՝ սովորական և օտարերկրյա գիտա-հետազոտական հիմնարկներին ու նշանավոր գիտականներին:

Գիտական հետազոտաթյուններից զատ, Հայ աստղագետները հսկայական աշխատանք են կատարել գիտության նվաճումների ծովովրդականացման ուղղությամբ: Հրապարակվել են մհծ թվով զիտա-հանրամատչելի հոդվածներ ու գրքույիններ, կարդացվել հարյուրավոր գասախոսություններ: Բյուրականի աստղադիտարանում ընդունվել են մի քանի հազար էքսկուրսիաներ:

Զգալի աշխատանք է կատարվել նաև ուսանողության հետ: Մեր երկրի տարբեր համասարանների և ինստիտուտների մի քանի հարյուր ուսանողներ ուսումնական և արտադրական պրակտիկում են անցել Բյուրականի աստղադիտարանում:

* * *

Հայաստանում աստրոֆիզիկայի զարգացման վերաբերյալ վերևում բերված համառոտ ակնարկը վկայում է այն մասին, որ մինչև սովորական կարգերի հաստատումը Հայաստանում չեն կատարվել աստղագիտական լուրջ հետազոտություններ: 1933—1934 թթ. սկսած արվել են առաջին քայլերը գիտության այդ բնագավառում աշխատանքներ ծավալելու ուղղությամբ: Սակայն միայն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կազմակերպություն (1943 թ.) և հատկապես Բյուրականի աստղագիտարանի ստեղծումից (1946 թ.) հետո լայն թափ են ստացել աստրոֆիզիկայի ժամանակակից պրոբլեմներին նվիրված հետազոտությունները:

Բյուրականում՝ կատարված հետազոտությունները նպաստել են աստրոֆիզիկայի մի շարք կարևորագույն պրոբլեմների լուծմանը: Այդ աշխատանքներն զգալի ազդեցություն են թողել Համաշխարհային աստղագիտության զարգացման վրա: Նրանցով աստղագիտության մեջ ստեղծվել են նոր ուղղություններ, որոնք ունեն իրենց բազմաթիվ հետևողներն ամրուց աշխարհում:

Ծնորչիվ նոր, ճգոր գիտողական գործիքների տեղակայման, ներկայումս է՛լ ավելի լայն հեռանկարներ են բացված Հայաստանում աստրոֆիզիկական հետազոտությունների հետագա զարգացման համար:

В. А. АМБАРЦУМЯН, Л. В. МИРЗОЯН

РАЗВИТИЕ АСТРОФИЗИКИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Р е з ю м е

В древней Армении физико-математические науки были представлены лишь именами отдельных ученых. Наиболее крупным из них был Анания Ширакаци (VII век), значение работ которого по астрономии и математике выходило за пределы не только Армении, но и всего Ближнего Востока. После того как Армения лишилась своей государственной самостоятельности, развитие этих наук почти полностью прекратилось.

С установлением Советской власти в Армении создаются необходимые предпосылки для развития естественных наук. Наиболее важным мероприятием в этом направлении явилось основание Ереванского университета.

Для подготовки кадров по астрономии в 1933—34 учебном году при Ереванском университете была организована Астрономическая обсерватория. Наряду с практикой студентов, здесь проводились некоторые научные исследования.

В 1943 г. с организацией Академии наук Армянской ССР начинается интенсивное развитие физико-математических наук, что в полной мере относится и к астрономии.

В 1946 г. начинается строительство Бюраканской астрофизической обсерватории. Одновременно начинаются работы по установке телескопов и по подготовке кадров.

В основу плана научно-исследовательских работ Обсерватории ставится проблема строения Галактики.

Обсерватория за сравнительно короткий срок достигла серьезных успехов, что было обусловлено, прежде всего, целестремленностью и последовательностью исследований. Это наглядно иллюстрируется всем ходом развития астрофизических исследований в Обсерватории.

Для изучения строения Галактики большую важность представляло исследование межзвездной поглощающей среды.

Первые работы Бюраканской Обсерватории как раз и были посвящены этому вопросу.

Логическим развитием этих работ было исследование пространственного распределения в Галактике звезд различных типов. Выяснилось, что звезды некоторых классов имеют тенденцию образовывать в пространстве физические системы. Глубокое исследование этой особенности распределения звезд в тесной связи с их физическими характеристиками привело к открытию большого научного и мировоззренческого значения — к открытию звездных ассоциаций.

Дальнейшее развитие научной деятельности Обсерватории было во многом предопределено этим открытием. Исследования звездных ассоциаций и связанных с ними туманностей занимали основное место в работах Обсерватории.

Результаты этих исследований свидетельствуют о том, что процесс звездообразования в Галактике продолжается и в настоящее время. Звезды, входящие в состав звездных ассоциаций, являются недавно возникшими образованиями. В атмосферах, во внешних слоях этих объектов происходят бурные процессы, определяющие их развитие.

Этот факт поставил перед Обсерваторией задачу исследования физически неустойчивых, так называемых нестационарных звезд. Ряд полученных Обсерваторией важных резуль-

татов явился следствием этих исследований и относился к проблеме источников звездной энергии.

Для некоторых нестационарных образований характерно свойство сильного излучения в радиодиапазоне. В Обсерватории были созданы необходимые условия для развития радиоастрономических исследований для всестороннего изучения этих образований.

Оказалось, что источниками космического радиоизлучения являются также некоторые звездные системы-галактики. Обсерватория начала ставить работы по их физическому и статистическому исследованию.

Работами, выполненными по этим актуальным проблемам, Обсерватория внесла ценный вклад в мировую астрономическую науку. Ею созданы новые научные направления с многочисленными последователями во всем мире.

Кроме упомянутых работ, в Армении за последние годы был выполнен ряд ценных наблюдений новых звезд и комет, искусственных спутников Земли и космических ракет.

За время существования Бюрakanской астрофизической обсерватории ею выпущено 28 выпусков «Сообщений Бюрakanской обсерватории». За эти годы в Советском Союзе и за границей опубликовано около 300 научных работ армянских астрофизиков.

Бюрakanская Обсерватория поддерживает научные связи со многими советскими и иностранными астрономическими учреждениями. В списке адресатов «Сообщений Бюрakanской обсерватории» состоит около 500 учреждений и отдельных крупных ученых почти 50 стран.

Армянскими астрофизиками ведутся совместные научные работы с рядом Обсерваторий, в частности — Ленинградского университета, ГАО АН СССР и с Абастуманской астрофизической обсерваторией АН Грузинской ССР.

Проведенные в Армении с участием советских и иностранных ученых совещания по звездным ассоциациям (1951 г.), физике звезд и туманностей (1955 г. и 1960 г.) и нестационарным звездам (1956 г.) сыграли положительную роль в развитии мировой астрофизики.

Армянские астрофизики принимали активное участие во

всех всесоюзных и во многих международных астрофизических конференциях и совещаниях, в съездах Международного астрономического союза.

Значительна роль Бюраканской обсерватории в популяризации достижений астрономической науки, в подготовке научных и педагогических кадров.

Установка в последнее время новых мощных наблюдательных приборов в Бюракане открывает еще большие перспективы для дальнейшего развития астрофизических исследований в Армении.